



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

### ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

#### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

ԵՆԹԱԹԵՄԱ՝ «ԻՆՉՊԵՍ Է ԱԶԴՈՒՄ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ»

ԱՌԱՐԿԱՆ՝ «ԴԱՍՎԱՐ»

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

Երևան 2022

## *Բովանդակություն*

1. Ներածություն

.....  
3

2. ԳԼՈՒԽ 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները տարրական դասարանների աշակերտի համար.....5

3.Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը աշակերտների զարգացման գործում:.....12

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դպրոցում:.....14

5. ԳԼՈՒԽ 2. Հետազոտական աշխատանք.....25

6.Եզրակացություն.....32

7.Օգտագործված գրականության ցանկ.....33

## Ներածություն

**Հիմնահարցի արդիականությունը:** Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, իսկ վերջին ժամանակներում համավարակի շրջանակներում հեռավար կրթության մուտք գործելը կրթական համակարգ առավել ակնհայտ դարձրեց տեղեկատվական հաղորդակցության և տեխնոլոգիաների կիրառման դերը ուսումնական գործընթացում:

Հենց այս հանգամանքներով էլ պայմանավորված այսօր ուսումնական գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտություն է առաջանում կիրառել էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներ: Դասերի ընթացքում կիրառվող էլեկտրոնային ուսումնական ռեսուրսները նպաստում են ուսուցանվող նյութի բովանդակության հարստացմանը, դասերը դարձնում տրամաբանական և որոնողական բնույթի, ինչպես նաև լուծում է աշակերտների հետաքրքրասիրության, ստեղծագործական ընդունակությունների զարգացման, մտավոր գործունեության խթանման ուղիների որոնման խնդիրները: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի կազմակերպման առանձնահատկությունն այն է, որ գործունեության կենտրոնն աշակերտն է, որը ելնելով իր անհատական ընդունակություններից և հետաքրքրություններից՝ կառուցում է իր ուսուցման գործընթացը: Այդօրինակ դասերի կազմակերպման ընթացքում հաճախ ուսուցիչը հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, որը խրախուսում է յուրօրինակ մոտեցումը, խթանում է ակտիվությունը, նախաձեռնությունը, ինքնուրույնությունը:

Տարրական դպրոցում գրեթե անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Առաջանում են մի շարք խնդիրներ՝ որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը:

Այստեղ օգնության է գալիս համակարգիչը, համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ապագա ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն լինի մեղիագրագետ:

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը,

կիրառելու այն ինքնակրթության համար: ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապատելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: ՏՀՏ-ն տալիս է հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ հասանելի մնալ: Համակարգչային թեստերի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում արագ գնահատելու աշակերտի կողմից ստեղծված նյութերը:

**Թեմայի նպատակն է՝** ուսումնասիրել տարրական դասարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների դերը: ՏՀՏ-ի միջոցով ավելի արագ է, հեշտ և իհարկե հետաքրքիր աշակերտների համար: ՏՀՏօգտագործելը աշակերտները ավելի շատ խաղ են համարում, սակայն այդ խաղերի միջոցով նրանք լուծում են խնդիրներ և վարժություններ:

#### **Հետազոտության խնդիրներն են՝**

- Ուսումնասիրել ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտամեթոդական գրականությունը, դիտարկել դրանցում ներկայացված սկզբունքները:
- Ուսումնասիրել և վերլուծել ՀՀ տարրական դպրոցի պետական կրթական չափորոշիչները և առարկայական ծրագիրը, ինչպես նաև տարրական դասարաններում գործող դասագրքերը:
- Ուսումնասիրել և դիտարկել տարրական դասարաններում մաթեմատիկայի և մայրենիի դասերին էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կիրառման հնարավորությունները,
- Մշակել և փորձարկել էլեկտրոնային ուսումնական առաջադրանքներ,
- Դիտարկել էլեկտրոնային ուսումնական առաջադրանքների կիրառման օրինակները սովորողների ուսուցման գործընթացում,
- Ներկայացնել էլեկտրոնային ուսումնական առաջադրանքների արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

#### **Կիրառվող մեթոդները:**

- Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության ուսումնասիրում.
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, միջոցների օգտագործման հնարավորությունների բացահայտում:
- Կարծիքների հավաքում, վերլուծում, ուսումնասիրում , ընդհանրացում:

- Փորձի կիրառում, աշխատանքների վերլուծություն:

**Գլուխ 1.Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները տարրական դասարանների աշակերտի համար:**

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Առաջանում են մի շարք խնդիրներ. որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը: Այստեղ օգնության է գալիս համակարգիչը, համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն լինի մեղիագրագետ:

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների իմացությունն ու հմտությունը, կիրառելու այն ինքնակրթության համար: ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: ՏՀՏ-ի միջոցով բացատրողական-նկարագարող մատուցումը փոխարինվում է կիրառականով: Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում է անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: ՏՀՏ տեխնոլոգիաները տիրապետել և ներմուծել կրթական գործընթաց, սկսել է 2007 թվականից: Գործունեության մեջ առանձնացնում ենք.

- աշխատանքային փաստաթղթերի էլեկտրոնային ձևակերպում,
- կրթության որակի վերահսկողություն,
- նախագծման և գիտահետազոտական գործունեության մեջ սովորողի ներգրավումը որպես խթան ուսուցչի ինքնազարգացման ու կատարելագործման մեջ:

SՀS-ն տալիս է հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ հասանելի մնալ: Ուսուցման որակի զարգացման և բարելավման նպատակով մոնիտորինգ ենք անցկացնում գնահատման մեջ ձեռքբերումների վերաբերյալ: Համակարգչային թեստերի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում արագ գնահատելու աշակերտի կողմից կատարված աշխատանքը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս պարզորոշ տեսնել յուրացման արդյունքը յուրաքանչյուր աշակերտի, առարկայի, դասարանի կտրվածքով և պատկերացում կազմել կրթական որակի մասին: Նաև մեթոդը հնարավորություն է տալիս ուսուցումը դարձնել մատչելի և հասանելի ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների համար:

SՀS-ն նպաստում է նյութի յուրացմանը, ամրապնդմանը, աշակերտին ներգրավում է ուսուցանվող նյութի մեջ: SՀS-ն օգտագործվում է նոր նյութմատուցելու, ամրապնդելու, կրկնելու, ծնողական հավաքների, դպրոցական միջոցառումների ժամանակ: Աշակերտների ներգրավումը նախագծման և հետազոտական գործունեության մեջ նպաստում է խոսքի զարգացմանը, խթանում ստեղծագործական մտքի դրսևորումը: Ուսուցիչն իր գործունեության ողջ ընթացքում դառնում է սովորողի գործընկերը:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել աշակերտների առողջությանը, կիրառել ֆիզիկական և դինամիկ դադարներ, աչքերի հանգստացնող մարզանքներ:

SՀS-ի կիրառման մեծագույն առավելությունը համարում ենք փնտրել և սովորել սիրող ուսուցչի ինքնակրթությունն ու ինքնազարգացումը, քանի որ սա շատ կարևոր բաղադրիչ է ժամանակակից ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ:

Այսպիսով՝ SՀS կիրառումը ուսուցման գործընթացում թույլ է տալիս.

Զարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտությունները,

Խթանել միտքը,

Զնավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և

իրավազեկվածություն,

Սովորողին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ

Այսպիսով, SՀS-ի կիրառումը տարրական դպրոցի կրթական գործընթացում կնպաստի

պատկերավոր մտածողության զարգացմանը և կբարելավի կրթական գործընթացի արդյունավետությունը:

Աշխարհում տեղի ունեցող գործընթացներն անշեղորեն տանում են տեղեկատվական հասարակության ձևավորմանը, որի առանձնահատկություններից են՝ տեղեկատվության, գիտելիքների, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը հասարակության կյանքում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) արտադրանքի ծավալի աճը ընդհանուր արտադրության ծավալի մեջ, ՏՀՏ ոլորտում աշխատողների թվաքանակի ավելացումը, հասարակության թվայնացմանը: Գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորումը պահանջում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ, օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաներ, հաղորդակցվի հասարակության անդամների հետ, բավարարի իր տեղեկատվական պահանջները, մուտք գործի համաշխարհային տեղեկատվական շտեմարաններ:

Զարգացման այս միտումները՝ տեղեկատվության ստացման, մշակման, պահպանման և փոխանցման առումով, բարձր պահանջներ են ներկայացնում հասարակության բոլոր անդամների, առավել ևս՝ աշխատանքային շուկայում մասնագետների գիտելիքների և հմտությունների մակարդակին: Այսօր տեղեկատվության հետ աշխատանքը չի կարելի պատկերացնել առանց համակարգիչների, թվային այլ տեխնոլոգիաների և ժամանակակից կապուղիների: Դրանք, լինելով մարդու մտքի թոնիչի արդյունքը, մնում են սոսկ սարքեր, որ ազատում են մարդուն մեծածավալ մեխանիկական աշխատանք կատարելուց: Տեղեկատվության հետ արդյունավետ աշխատանքի կարևորագույն երաշխիքներն են՝ հասարակության անդամի տեղեկատվական մշակույթը, վերլուծական և լեզվատրամաբանական հմտությունները:

Հասարակության լիարժեք և ակտիվ անդամ, աշխատաշուկայում մրցունակ մասնագետ ձևավորելու համար անհրաժեշտ է ներկայացվող բարձր պահանջներին համապատասխանող կրթական համակարգ, որի պարտադիր պայման է ՏՀՏ-ի ներդրումը կրթության մեջ, ինչպես նաև ՏՀՏ ոլորտի առարկաների միջանցիկ և անընդհատ դասավանդումը կրթության բոլոր աստիճաններում՝ սկսած տարրականից: Դա թույլ է տալիս ապահովել՝

- ուսումնական նյութի մեծ ծավալի ուսումնասիրությունը,
- ձևավորել նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և սարքերի հետ աշխատանքի հմտություններ,
- սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգ՝ հիմնված ազգային և համաշխարհային արժեքների վրա:

Հասարակական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, կյանքի և մշակույթի արագընթաց զարգացումը, մանկավարժական գործունեության ոլորտում նոր պահանջների ձևավորումը բերեցին կրթական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությանը: Այսօր կրթական համակարգի համակարգված վերազինումը մեր երկրի կրթական քաղաքականության հիմքն է, նրա գլխավոր ռազմավարական ուղղվածությունը: Կրթական բարեփոխումների անհրաժեշտությամբ է պայմանավորված կրթության բովանդակության փոփոխությունը, որն էլ իր հերթին նպաստել է ուսուցման ու նոր նպատակների առաջադրմանը: Կրթությունը ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան կազմակերպելը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից մեկն է:

Ուսուցչի մասնագիտական գործունեությունը լիարժեք չէ, եթե այն կառուցված է արդեն ծանոթ, մեկ անգամ կիրառված մեթոդների վերարտադրման վրա: Նմանատիպ գործունեությունն ամբողջական չէ նաև այն պատճառով, որ չինպաստի մանկավարժի անձի զարգացմանը, նրա ստեղծագործականության ակտիվությանը.ի վերջո առանց ստեղծագործության չկա վարպետություն:

Ուսուցչի ստեղծագործական գործունեությունը յուրաքանչյուր նորարարական գործընթացի հիմքն է:

Ուսուցչի ստեղծագործական գործունեությունն ինքնին նպաստում է նորարարությունների մշակմանն ու կիրառմանը: Մանկավարժները տարբեր մոտեցումներ են դրսևորում նորարարությունների ընդունման և կիրառման նկատմամբ, ունենում են տարբեր պատրաստվածության մակարդակ: Այսինքն նորարարական գործընթացի բնույթը, ընթացքը մեծապես պայմանավորված է ինչպես կրթական հաստատության եղած պայմաններով, այնպես էլ ուսուցչի՝ այդ գործընթացին լիարժեք



պատրաստ լինելուց:

Նորարարական գործընթացին պատրաստ լինել ասելով հասկանում ենք ուսուցչի մասնագիտական և անձնային որակների միասնությունը. դրանք են որոշում նրա ուղղվածությունը, վերաբերմունքը և հետաքրքրվածությունը սեփական մանկավարժական գործունեության զարգացմանը, դպրոցի ողջ կոլեկտիվի գործունեության արդյունքների պատասխանատվությանը, ինչպես նաև աշակերտների կրթության արդի հիմնախնդիրները բացահայտելու ունակությամբ, դրանց լուծման արդյունավետ միջոցները գտնելու և իրականացնելու հմտություններով:

Նորարարական գործընթացներին ուսուցչի պատրաստվածությունը մանկավարժի մասնագիտական կարևորագույն որակներից մեկն է, առանց որի հնարավոր չէ հասնել մանկավարժական վարպետության բարձր մակարդակի: Մանկավարժական նորարարությունն ունի ինքնատիպ բնույթ և որոշակի առանձնահատկություններ.

- ձևով և բովանդակությամբ նոր արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառում,
- աշակերտների ստեղծագործական ունակությունների և հոգեկան գործընթացների զարգացում և դաստիարակություն,
- ուսուցման ակտիվ մեթոդների կիրառում, որոնք պահանջում են բարդության որոշակի մակարդակ ունեցող գիտելիքների յուրացում,
- համագործակցային մեթոդների կիրառում, հետադարձ կապի ապահովում:

Տարրական դպրոցի ուսուցչի նորարարական գործունեությունը ենթադրում է նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում ուսուցման նոր կազմակերպման ձևերի օգտագործում: Դա է ենթադրում ուսուցչի նորարարական գործունեության բովանդակությունը:

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով. ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակային ընտրությունը:

Մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու, օգնելու է իրեն:

Ուսուցման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ավանդական կամ ժամանակակից:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույնուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա գործուն և անմիջական մասնակցությունը: Ուսուցման ժամանակակից մեթոդների հիմքում ուսուցման գործընթացում սովորողի ինքնուրույնությունն է, նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը այդ գործընթացին:

Ժամանակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման դեպքում ուսուցիչը դառնում է կազմակերպիչ, խորհրդատու, համակարգող:

Մանկավարժական տեխնոլոգիան ուսուցչի գործունեության կազմակերպման այն եղանակն է, որի ժամանակ նրա բոլոր գործողություններն ունեն կոնկրետ ուղղվածություն, ենթադրում են որշակի արդյունք, ներկայանում են նախապես որոշված հաջորդականությամբ, կրում են կանխատեսող և ամբողջական բնույթ:

Տարրական դպրոցում ուսուցիչները սովորաբար կարևորում են աշակերտներին որոշակի գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ հաղորդելը՝ բնավ չանհանգստանալով, որ աշակերտը աստիճանաբար դառնում է սուկ ուսուցչի հրահանգները կատարող և չի սովորում նախաձեռնություն հանդես բերել, ստեղծագործական մոտեցում ցուցաբերել, ինքնուրույն դատողություններ և այլն կամ կորցնում է իր այդ որակները: Մինչդեռ սրանք առավել կարևոր են, քանքուն գիտելիքը, որովհետև եթե աշակերտը կարողանում է ուսումնական գործընթացում ստեղծագործական մոտեցում ցուցաբերել, եթե նա նախաձեռնող է և ակտիվորեն մասնակցում է ուսումնական տարատեսակ գործողությունների, ապա նա շատ արագ կկարողանա յուրացնել ցանկացած ուսումնական նյութ, մինչդեռ առանց այս հատկանիշների նա կվերածվի գիտելիքների որոշակի պաշար մտապահողի: Եվ կրկին օգնության են գալիս մանկավարժական

տեխնոլոգիաները: Մանկավարժական տեխնոլոգիաներն առավել արդյունավետ են այնտեղ, որտեղ կան ուսումնական նյութի բովանդակության հարուստ շարադրանք և բազմաբնույթ ստեղծագործական հանձնարարություններով առաջադրանքներ պարունակող դասագրքեր: Տարրական դպրոցում շատ կարևոր է, որ դրանք ունենան հումանիտար ուղղվածություն և դրական ներգործություն երեխայի հուզական և սոցիալ-անձնային զարգացման վրա:

### **Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը աշակերտների զարգացման գործում:**

Տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտի օգնականն են (դրական կողմերը):

Աշխարհում տեխնոլոգիաները բառացիորեն ամենուր են, և երեխաները ավելի շուտ են հարմարվում են դրան, քան նախորդ սերունդները: Ի տարբերություն ուսուցիչների, սովորողները մեծանում են թվային աշխարհում: Բոլոր տարիքի սովորողների համար բացարձակապես բնական է օգտագործել տեխնոլոգիան իրենց կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Ահա թե ինչու դասարանում թվային գործիքները դառնում են ավելի ու ավելի կարևոր: Դասավանդման ավանդական մեթոդներն արդեն իսկ վերափոխվում են՝ հարմարվելով 21-րդ դարի սովորողների կարիքներին:

Տեխնոլոգիաների ինտեգրումը կրթական պրոցեսին սովորողների մոտ բարձրացնում է հետաքրքրասիրությունը, խթանում նրանց ներգրավվածությունը և հանգեցնում է ավելի լավ սովորելու և հասկանալու: Այս գործոնները առաջնային են յուրաքանչյուր ուսուցիչի համար, և այսօր դրանց հնարավոր է հեշտությամբ հասնել՝ դասարանում թվային գործիքներ օգտագործելով:

Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արձարծվում և բարձրացվում են սոցիալ-մշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական և սոցիալացման տեսակետից: Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ

մասնագետից առցանց (օնլայն) ֆորումների միջոցով, կիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից:

Այսօր երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով. խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն: Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են:

Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչուների պատասխանները կարող են գտնվել համացանցում: Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտի թշնամի (բացասական կողմերը):

Առաջնահերթ կարևոր է աշակերտի առողջությունը, իսկ 45 րոպե համակարգչի առաջ նստելը 6-10 տարեկան երեխայի համար վնասակար է: Գրիչով աշխատանքը օգնում է մատների մկանների ձևավորմանը:

Պարբերաբար համակարգչից օգտվելը մարդու մոտ առաջացնում է կեցվածքի փոփոխություն՝ ողնաշարի շեղումներ, կուզ և, իհարկե, տեսողության վատացում: Կարճատեսությունը համատարած բնույթ է կրում: Հեռուստատեկրանին նայելուց լարվում են աչքերը, իսկ եթե դա երկար է տևում աչքերի ծանրաբեռնվածությունը դառնում է չափից ավելին: Եթե չձեռնարկել միջոցներ, ապա տեսողության հետ խնդիրները անխուսափելի կդառնան:

Գրքով աշխատելիս անմիջական շփումն ավելի շատ է, աշակերտն ավելի մոտ է նյութին: Չենք կարող բոլոր դասերը համակարգչային վարել, օրինակ եթե եռանկյուն է պետք գծել աշակերտը պետք է հաշվի կողմի երկարությունը այնուհետև քանոնի օգնությամբ գծի, ջնջի, ուղղի, իսկ համակարգչով կատարում է մեխանիկական աշխատանք դնելով եռանկյան նշանը: Այս դեպքում տեսրով և գրքով աշխատանքն ավելի արդյունավետ է: Միաժամանակ, համակարգչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ դրսևորվում է ընդհանուր թուլություն և հոգնածություն, քնի խանգարումներ:

Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան

գործընթացների վրա (մասնավորապես երեխայի հիշողությունն է վատանում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Հեռուստացույցը ազդում է երեխայի ուսման պրոցեսի վրա:

### **Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դպրոցում:**

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն (ՏՀՏ) արագորեն մուտք են գործում կրթական գործունեության տարբեր ոլորտներ: Դրան նպաստում են ինչպես արտաքին գործոնները, որոնք պայմանավորված են համապատասխան մասնագետների նախապատրաստման անհրաժեշտությամբ, այնպես էլ ներքին գործոններով, որոնք կապված են կրթական համակարգերում ժամանակակից համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման տարածման, կրթության պետական և միջպետական ծրագրերի ընդունման, մանկավարժների անհրաժեշտ փորձի ի հայտ գալուն: ՏՀՏ-ի միջոցների կիրառումը իրապես շոշափելի ազդեցություն ունի մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: Ժամանակակից դպրոցի մանկավարժների և սովորողների մասնագիտական որակների բարձրացման հիմնական խնդիրներից մեկը նրանց արհեստավարժության մեծացումն է ՏՀՏ-ի օգտագործման ոլորտում: Կրթական համակարգում հաշվիչ տեխնիկայի ներդրումը մեծ հնարավորություններ է տալիս կատարելագործելու և բարելավելու մանկավարժական մեթոդները ոչ միայն փորձի փոխանակման և ստեղծագործական գործունեության ընթացքում, այլ նաև գործնական խնդիրների լուծման ժամանակ, որոնց համար հիմք են ուսումնամեթոդական նյութերի կուտակումը, դպրոցի ներքին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը մանկավարժների և աշակերտների կողմից:

ՏՀՏ-ի օգտագործումը ուսուցչին մեծ հնարավորություններ է ընձեռում առարկայի ուսուցման ժամանակ: Դասերն ուղեկցվում են մուլտիմեդիային ներկայացումներով, առցանց (online) թեստերով և ծրագրային փաթեթներով, որոնք թույլ են տալիս սովորողներին խորացնել նախապես ստացված գիտելիքները:

SZS-ի օգտագործմամբ ցանկացած նյութի ուսուցում աշակերտներին նոր հնարավորություններ է տալիս մտածելու և մասնակցելու դասի նյութի ստեղծմանը, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ:

Նոր կրթական տեխնոլոգիաները բնորոշվում են ուսումնական նյութերի իրագործման համակարգչային հատուկ տեխնոլոգիաների կիրառմամբ, մեդիայի տեխնոլոգիաները: Համակարգչային դիզայնի տեխնոլոգիայի կիրառմամբ ուսումնական փաստաթղթերի նյութերը կարող են ձևավորվել որոշակի ձևաչափերով, կազմակերպվել որոշակի կառուցվածքներով և արտապատկերվել տարրերի որոշակի կազմություններով: Դրանք բավարարում են տեսային տեղեկատվության ներկայացման գեղագիտական պահանջները, դրա ընկալման առանձնահատկությունները և ապահովում փաստաթղթերի հարմար ընթերցումը և տեղեկատվության արդյունավետ ընկալումը:

Կրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն ստեղծում է նպաստավոր պայմաններ սովորողի անձի ձևավորման համար և բավարարում ժամանակակից հասարակության պահանջները: Այստեղ նկատի ունենք տեղեկատվության աղբյուրի գրագետ օգտագործումը, նրա հուսալիության գնահատումը, նոր տեղեկատվության համեմատումը նախապես ստացված գիտելիքների հետ, տեղեկատվական գործընթացի ճիշտ կազմակերպման կարողությունը: Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը տարբեր առարկաների /մաթեմատիկա, մայրենի, տեխնոլոգիա և այլն/ դասերի ժամանակ զգալիորեն բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը, օգնում դասի ժամանակ ստեղծելու համագործակցման մթնոլորտ, աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրվող նյութի նկատմամբ: SZS-ների կիրառումը բարձրացնում է հետաքրքրությունը դասի նկատմամբ, ակտիվացնում սովորողների իմացական գործունեությունը, զարգացնում է նրանց մշակութային հնարավորությունները, հնարավորություն է տալիս կազմակերպելու ինքնուրույն և խմբակային աշխատանք, դասի ժամանակ օգնում է բարելավելու սովորողների գործնական կարողությունները և հմտությունները, թույլ է տալիս որոնել, մշակել և յուրացնել տարբեր աղբյուրների, ինչպես նաև համացանցի տեղեկատվությունը: SZS-ի կիրառումը ուսուցման գործընթացում կարելի է կազմակերպել երկու ուղղություններով՝ ցուցադրատեսողական և ինքնուրույն էլեկտրոնային աշխատանքի ստեղծման: Առաջին դեպքում սովորողներն ունեն հնարավորություն տեսածը մեկնաբանելու, նկատողություններ անելու, փոփոխություններ մտցնելու:

Տեքստային խմբագրիչների միջոցով աշակերտն անմիջապես տեսնում է իր աշխատանքի արդյունքները՝ համակարգիչն ընդգծում է սխալները, և օգնում է աշակերտին ընտրելու, ուղղելու այդ սխալները, արդյունքում սովորողը տեսնում և վերլուծում է իր կատարած աշխատանքի արդյունավետությունը: Ինքնուրույն ցուցադրությունների պատրաստման ժամանակ զարգանում են հաղորդակցման այնպիսի կարողություններ, ինչպիսիք են առաջադրանքի ընկալում, կարևորի ընդգծում, պլանավորում և այլն: Ինքնուրույն աշխատանքի ստեղծումն ավելի բարդ աշխատանք է, որը պահանջում է տեխնիկական կարողություններ, զանազան հաղորդակցական կարողություններ նյութի ամբողջականացման համար: Այն կատարվում է կառուցողահետազոտական մեթոդի հիման վրա: Երկու դեպքում էլ գիտելիքների ամրապնդման և ստուգման համար կազմվում են համապատասխան առարկաների գծով թեստեր: Այսպիսով, կարելի է ընդգծել ՏՀՏ-ի օգտագործման հիմնական ուղղությունները.

- տեսողական տեղեկատվություն /զննական, տեսողական նյութ/,
- ցուցադրական նյութ /վարժություններ, աղյուսակներ, հասկացություններ/, խաղեր,
- սովորողների կարողությունների և հմտությունների վերահսկում,
- սովորողների ինքնուրույն որոնման, ստեղծագործական աշխատանք,
- ուսուցման գործընթացը դարձնել ստեղծագործական, զննողական:

Այսպիսով, կրթական համակարգում մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա շոշափելի ազդեցություն է թողնում ՏՀՏ-ների կիրառումը: ՏՀՏ միջոցների հետ աշխատանքի ընթացքում փոփոխվում է աշակերտների մտածողական գործունեության անձնական կարգավորումը. բարձրանում են անձի պաշտպանողական մեթոդների դերը, նպատակի հասանելիության սուբյեկտիվ մակարդակը, փոփոխվում են գործունեության հսկման մեթոդները, կարգավորվում են շարժառիթները:

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված աշակերտի հետագա ուսուցումը: Մա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ:

Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

Ակադեմիկոս Ա. Պ. Մեմյոնովի հայտարարությունը, թե՛ «Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում», պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում:

Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում: Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական-պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, նրա մշակույթի տարրը :

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին դասին: Կրտսեր դպրոցում տեխնոլոգիաները կարևոր դերակատարություն ունեն կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/,
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները,
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը,
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:



Տարրական կրթության տեխնոլոգիաների կիրառումը ընթանում է հետևյալ ուղղություններով.

- ՏՀՏ-ների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ /դիդակտիկ միջոցների ստեղծում, տարբեր առարկաների համար պատրաստի համակարգչային ծրագրերի մշակում և օգտագործում, աշխատանքի մեջ ինտերնետ-ռեսուրսների օգտագործում և այլն/:
- Դասի կազմակերպում ՏՀՏ-ների օգտագործմամբ / ՏՀՏ-ի օգտագործում դասի տարբեր փուլերում, գիտելիքների ամրապնդման և ստուգման համար, խմբային և անհատական աշխատանքի կազմակերպում, աշխատանք ծնողների հետ/:
- Կրտսեր դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում ՏՀՏ-ների օգտագործմամբ:

ՏՀՏ-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Իհարկե, աշխատելով կրտսեր դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ «Մի վնասիր»:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի զարգացմանը:

Հետևաբար, ՏՀՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: ՏՀՏ միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, ՏՀՏ-ների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Այդպիսով, ՏՀՏ-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՀՏ-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի:

Դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/, Ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում,

**Պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում,**

Դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում,

Կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում,

Տեքստային աշխատանքների ստեղծում,

**Մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:**

SZS-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանահուզական ֆոնի վրա:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Մենք ունենք երկու հիմնական առավելություն՝ որակական և քանակական: Որակական առումով նոր հնարավորությունները ակնհայտ են, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահայտվում են նրանով, որ մեդիամիջավայրը անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Իսկապես, տեքստի 1 էջը դասավանդողը արտաբերում է 1-2 բուլետի ընթացքում: Այդ նույն բուլետի ընթացքում լայնեկրան տեսանյութը բերում է ինֆորմացիայի ավելի մեծ ծավալ:

Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը բուլետում ընկալում է և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների «միացման» դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր:

Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը բույնում ընկալում է և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների «միացման» դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր:

Կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր է առաջացնում:

ՏՀՏ-ի օգտագործումը դասի տարբեր փուլերում.

- սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը,
- նոր նյութի յուրացում,
- նոր նյութի ամրապնդում,
- դասի ամփոփում,
- տնային առաջադրանք,

Մեղիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները,
- համակարգել ձեռք բերած գիտելիքները,
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ,
- ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ,
- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբզուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը:

Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5% և տեսածի 20%-ը: Չայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50%:

Մեդիածրագրերը ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ են դարձնում:

Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ նյութի ուսումնասիրման համար միջինում կազմում է 30%, իսկ ձեռք բերած գիտելիքները պահպանվում են հիշողության մեջ ավելի երկար: Կրտսեր դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը:

Մեդիաներկայացման /պրեզենտացիա/ կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից, սահիկահանդեսի օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային և անհատական:

Մուլտիմեդիա շնորհանդեսը, այդպիսով, ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին.

- կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը,
- զարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը,
- դաստիարակչական առումով՝ գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում:

Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել՝

1. Թեմայի նշման համար դասի թեման ներկայացված է սահիկների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

2. Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ-շնորհանդեսներ,

ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ:

3. Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտ է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

4. Գիտելիքների ստուգման համար համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Թեստերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տեսքում կամ հատուկ բլանկի վրա:

Կարելի է տարբերակել այս տեխնոլոգիայի հետևյալ առանձնահատկությունները.

- Կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ,
- Գրատախտակի և կավճի օգնությամբ դժվար է և անհարմար տարբեր գործիքների օգնությամբ բացատրել աշխատանքը,
- Շնորհանդեսի ներկայացման ժամանակ, նույնիսկ պրոյեկտորի օգտագործման դեպքում, սովորողի աշխատանքային տարածքը բավականին լավ լուսավորված է,
- Տեսանելի մակարդակի բարձրացում դասի ժամանակ,
- Դասի արդյունավետության բարձրացում,
- Միջառարկայական կապերի հաստատում,
- Ստեղծող և ՏՀՏ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն հատկացնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա,
- Փոխվում է վերաբերմունքը ԱՀ-ի (անհատական համակարգիչ) նկատմամբ: Երեխաները սկսում են ընկալել այն որպես ունիվերսալ գործիք մարդկային գործունեության ցանկացած բնագավառի աշխատանքի համար, այլ ոչ թե որպես գործիք՝ խաղալու համար:

Կրտսեր դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը SՀS-ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպական ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է, այն սովորողների, ովքեր ապրելու և աշխատելու են անսահմանափակ ինֆորմացիայի մուտքի պայմաններում:

Այսպիսով, մեղիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը:

Շնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին՝

- պատկերավոր ներկայացնել
- ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը
- կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը անիմացիայի շնորհիվ

Գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքների բազմազան ձևեր կրտսեր դպրոցում անցկացնելու համար: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է, իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր տարիքի սանիտարահիգիենիկ նորմերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաները և համակարգիչը կարևոր տեղ են զբաղեցնում ուսումնական գործընթացում՝ ընձեռնելով նոր հնարավորություններ ուսուցիչներին և սովորողներին: Ժամանակակից հասարակությունը կրթական հաստատություններին նոր մարտահրավերներ է առաջադրում, որոնք կապվում են տեղեկատվության հոսքի աճի հետ և պահանջվում է կրթական համակարգի արդիականացում:

փոխարենը անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները սովորողները ստանում են մյուս դասընթացների, ուսումնական գործունեության թվայնացման արդյունքում: Իսկ դասագիրքն էլ՝ որպես այդպիսին, դառնում է համացանցը: Մա շատ կարևոր քայլ է, քանի որ.


- թեթևանում է ուսումնական ծանրաբեռնվածությունը,
- սովորողին տալիս է փնտրելու, գատելու հմտություն,
- սովորողին տալիս է ընտրելու և ինքնակրթվելու հնարավորություն,
- ժամանակի ընթացքում արդեն հնացած բովանդակությունը արագ փոխվում է նորով:

Կարևոր են նաև ժամանակակից ուսուցման մեթոդները, որոնք նպաստում են տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը, զարգացմանը դպրոցում: Կարելի է առանձանցնել հատկապես նախագծային ուսուցումը, որը վերջին տարիներին կրթական հաստատություններում իրականացվող ուսուցման հիմնական մեթոդներից է: Օրինակ՝ սովորող-սովորեցնող մեթոդով դպրոցի սովորողները կրտսեր և միջին դպրոցականներին փոխանցում են համակարգչի տեխնիկական և ծրագրային սպասարկման, բլոգային գիտելիքներ և հմտություններ:

## ԳԼՈՒԽ 2. Հեռագրտական աշխատանք

Մեր հեռագրտության ընթացքում անցկացրեցինք հարցաթերթիկային հարցում և տարրական դպրոցի մանկավարժներին ներկայացրեցինք հարցաթերթիկ, որի նպատակն էր պարզել մանկավարժների վերաբերմունքը, կարծիքները և առաջարկությունները <<Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում>> տարրական դասարաններում նրանց կազմակերպման մանկավարժական պայմանների վերաբերյալ:


### 1. Ի՞նչ ծրագրով եք անցկացնում առցանց դասերը:



Առաջին հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե արդյոք ի՞նչ ծրագրով են անցկացնում առցանց դասերը: Հարցմանը մասնակից ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 34%-ը նշել են, որ առցանց դասերը անցկացնում են Zoom ծրագրով, 23%-ը առցանց դասերի ժամանակ կիրառում են Meet ծրագիրը, Viber ծրագիրը կիրառում են նրանց 19%-ը, Massanger-ը՝ 13-ը, իսկ hangouts meet ծրագրից օգտվում են հարցման մասնակից դասվարների 11%-ը: Այսպիսով ուսուցիչների մեծամասնությունը առցանց դասերը անցկացնում է Zoom ծրագրով:




## 2. Որքանով էիք պատրաստ նորագույն տեխնոլոգիաների միջոցով ուսուցմանը:




Վերոհիշյալ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե առկա ճգնաժամային իրավիճակում իրականացված հեռավար ուսուցմանն արդյոք նրանք պատրաստ են եղել. 30%-ը նշել է՝ եղել է լիովին պատրաստ, 54%-ը՝ մասամբ էր պատրաստ՝ անցում կատարելու հեռավար ուսուցմանը, իսկ մյուս 16%-ը՝ առհասարակ պատրաստ չի եղել:

## 3. Ձեր կարծիքով, որո՞նք են SS միջոցների օգնությամբ ուսուցման դրական կողմերը:




Վերոհիշյալ հարցին հարցախույզի մասնակից դասվարները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 56%-ը նշում է, որ ծնողն է բացահայտում երեխայի ուժեղ և թույլ կողմերը, 23%-ը ապահովում է յուրաքանչյուր երեխայի մասնակցությունը դասապրոցեսին, 21%-ը զարգացնում է երեխայի մեղիագրագիտության մակարդակը:

**4. Որո՞նք են SS միջոցներով ուսուցման բացասական կողմերը:**



Հաջորդ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե որոնք են հեռավար ուսուցման բացասական կողմերը, հարցվողների 39%-ը բացասական կողմերից է համարում այն, որ բացակայում է միմյանց հետ կենդանի շփումը: 30%-ը կարծում է, որ հեռավար ուսուցումը վնասում է երեխայի առողջությունը: Ըստ 14 %-ի՝ արդյունավետորեն չեն գնահատվում երեխայի գիտելիքները, 4%-ը համարում է, որ նկատվում է առաջադի-մության կորուստ՝ նշելով, որ առանց մեծահասակի երեխան ուշադիր չի լինում կամ շեղվում է դասապրոցեսից: 8%-ը կարծում է, որ մեծանում է ծանրաբեռնվածության աստիճանը, 5%-ը նշում է աշակերտների շրջանում համապատասխան տեխնիկաների (տեղեկատվական տեխնոլոգիաների) անհասանելիությունը:

**5.Արդյոք հեռավար ուսուցման շրջանակներում աշակերտները յուրացնո՞ւմ են ամբողջական ուսումնական նյութը:**




Հարցաթերթիկի հետևյալ հարցին, թե՞ աշակերտները ամբողջությամբ յուրացնում են

ուսումնական նյութը հեռավար ուսուցման շրջանակներում հարցի վերլուծությունից պարզեցինք, որ 58%-ը բավականաչափ է յուրացնում, 22 %-ը՝ լիովին, իսկ մյուս 20%-ը չի յուրացնում, քանի որ կրտսեր դպրոցականները ինքնուրույն չեն կարողանում կազմակերպել իրենց հեռավար ուսումնառությունը:


**6. Էլեկտրոնային միջոցներն օգտագործելիս ի՞նչ գործառույթներ եք իրականացնում երեխաների առողջությունը չվնասելու համար:**

Մեզ հետաքրքրում էր նաև, թե ինչ գործառույթներ են իրականացնում ուսուցիչները առցանց հարթակում երեխաների առողջությունը չվնասելու համար:




Ինչպես երևում է տրամագրում տրված պատասխանների ցուցանիշներից, ուսուցիչները մտահոգ են և իրականացնում են մի շարք միջոցառումներ, առաջադրանքներ, որպեսզի չվնասեն երեխաների առողջությունը էլեկտրոնային միջոցների կիրառման ժամանակ: Ինչպես գիտենք կրտսեր դպրոցական տարիքում չի խրախուսվում 20 րոպեից ավելի նստել համակարգչի կամ որևէ այլ գաջետի առջև և նպատակահարմար է պարբերաբար կատարել աչքերը հանգստացնող վարժություններ, իսկ դասի ավարտից հետո խորհուրդ տալ երեխաներին մի քանի րոպե լինել այնպիսի սենյակում, որը լուսավորվում է բնական լույսով:

7.Նշե՛ք խնդրեմ, թե որ, առարկայի դասագործընթացում եք կիրառո՞ւմ տեղեկատվական տեխնոլոգիաներ:




Հարցին թե՞ որ, առարկայի դասագործընթացում եք կիրառո՞ւմ տեղեկատվական տեխնոլոգիաներ հարցախույզի մասնակից ուսուցիչները, պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 36%-ը մայրենիի դասին է կիրառում, 31%-ը՝ մաթեմատիկա, 25%-ը ես և շրջակայի դասին, 8%-ը կիրառում է այլ առարկաների դասաժամին:

8.Հետևյալ դասերի ընթացքում ինչպիսի՞ տեղեկատվական տեխնոլոգիաներ եք կիրառում:




Այն հարցին, թե ինչպիսի՛ տեղեկատվական տեխնոլոգիաներ են կիրառում մայրենիի դասի ընթացքում, ուսուցիչների 33%-ը նշել են Power point ծրագիր, 25%-ը՝ էլեկտրոնային գրքեր, 15 %-ը տեսաֆիլմեր և սևաբլաթ գրատախտակ, 10%-ը e-school, իսկ 2%-ը՝ Learnpro ծրագիրը:

**9. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում ի՞նչ դժվարություններ են առաջանում:**



Վերոհիշյալ հարցին դասվարները պատասխանել են հետևյալ կերպ. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընթացքում, ուսուցիչների 57%-ը նշել է տեխնիկական խնդիրները 35%-ը՝ SS ոլորտում հմտությունների պակասը, իսկ մյուս 8%-ը դժվարություններ չի ունեցել:

**10. Նշե՛ք Ձեր ձեռքբերումները տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում:**



Այս հետազոտությունը մեզ բերեց այն եզրակացության, որ հարցման մասնակիցների կեսից ավելին մայրենիի դասերի ընթացքում կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ և հիմնականում կշռադատման փուլում: Կիրառվում են Power Point ծրագիրը, էլեկտրոնային գրքեր, սմարթ գրատախտակ և այլն: Հարցման մասնակիցների մեծ մասը կարծում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը զգալիորեն հեշտացնում է մայրենիի դասերի նախապատրաստումը:

### **Եզրակացություն**

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը, կիրառելու այն ինքնակրթության համար:

- ❖ ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում, աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում:
- ❖ Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Այսօր բազմաթիվ են ուսուցիչները, որոնք երբեմն վարում են համակարգչային դասեր, կարողանում են շատ հեշտ հեռավար ուսուցում իրականացնել: Օրինակ մաթեմատիկայի դասերին այն ուսուցիչները, որոնք տիրապետում են տեղեկատվական տեխնոլոգիաներին կարողանում են գրքի

խնդիրները դարձնել համակարգչային , իսկ այն ուսուցիչները, որոնք չեն տիրապետում՝ ուղղակի գրքից նկարում են խնդիրը և ցուցադրում աշակերտների կամ գիրքը ձեռքում պահած բացատրում:

- ❖ Փորձը ցույց է տալիս, որ շատ կարճ ժամկետում ՀՀ անցավ հեռավար ուսուցման և մեր ուսուցիչները շատ արագ կարողացան հեռավար ուսուցումը իրականացնել , որը բավական դրական արդյունք ցույց տվեց:

Գիտելիքները և հմտությունները ոչ այնքան նպատակ են, որքան ուսուցման միջոց և արդյունք:

### **Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ   Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

1. Մկրտչյան Ս. և ուրիշներ «Մաթեմատիկա 1» «Զանգակ 97»
2. Նալչաջյան Ա., <<Ընդհանուր հոգեբանության հիմունքներ>>-Երևան, 1990թ.
3. Վարդումյան Ս., և ուրիշներ -<<Հրաշք մատիկներ>>- Երևան, 2006թ.
4. Սոկրատ Մկրտչյան, Արամ Աբրահամյան, Սուրեն Իսկանդարյան <<Մաթեմատիկա 1-4: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ>>
5. Белошистая А., <<Мелкая моторика>> Москва, 2005г
6. Իսկանդարյան Ս. Ա. , Իսկանդարյան Ս. Ս. <<Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի ընտրովի գլուխներ>> ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2012թ.
7. myeduway.wordpress.com
8. krtsernordproc.wordpress.com
9. khanacademy.org
10. imdproc.am
11. innostud.am
12. ittrend.am
13. aspu.am
14. hetq.am
15. ashxengrigoryan.wordpress.com
16. hy.tierient.com

17. [enlightngo.org](http://enlightngo.org)

18. [evnreport.com](http://evnreport.com)

19. [gspi.am](http://gspi.am)

20. [srcaltufevo.ru](http://srcaltufevo.ru)

21. [ktak.am](http://ktak.am)

22. [vsu.am](http://vsu.am)

23. [dpir.mskh.am/hy](http://dpir.mskh.am/hy)

24. [admusinsk.ru](http://admusinsk.ru)

25. [chekhov.am](http://chekhov.am)